

«Գրանցված է»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«27» հունվարի 2015թ.

Պետական գրանցման համարը 1041511



Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Ք Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Վ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Գ Յ Ո Ւ Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հունվարի 2015թ.

N 02 - Ն

ք. Ս տ ե փ ա ն ա կ ե ր տ

Մ Ե Վ Ց Ե Լ Ի Տ Ա Կ Թ Ո Ղ Ն Վ Ա Օ Տ Ա Ր Ա Օ Ք Ն Ե Ր Ի Մ Ա Կ Ե Ր Մ Ն Ե Ր Ի Ճ Շ Տ Մ Ա Ն Ե Վ Մ Շ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Ն Ո Ւ Խ Ն Ա Մ Ք Ի Ը Ն Թ Ա Ց Ք Ի Վ Ե Ր Ա Հ Մ Կ Մ Ա Ն Կ Ա Ր Գ Ը Հ Ա Ս Տ Ա Տ Ե Լ Ո Ւ Մ Ա Մ Ի Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 19-ի N 588-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 856-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել սև ցելի տակ թողնված տարածքների մակերեսների ճշտման և մշակության ու խնամքի ընթացքի վերահսկման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Գալստյանին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԿԱՐԳ

ՍԵՎ ՑԵԼԻ ՏԱԿ ԹՈՂՆՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԽՆԱՍՔԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում համայնքների վարչական սահմաններում գտնվող սեփականության ու վարձակալության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց մակերեսների ճշտման, մշակության ու խնամքի ընթացքի վերահսկմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքների վարչական սահմաններում գտնվող սեփականության ու վարձակալության և անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերի սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց մակերեսների ճշտման, մշակության ու խնամքի ընթացքի վերահսկման համար ստեղծվում է հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի պետի գլխավորությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի մասնագետների և տարածքային գյուղատնտեսների մասնակցությամբ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը յուրաքանչյուր տարի մարտի 1-ին և հուլիսի 1-ին նախարարություն են ներկայացնում սև ցելի տակ թողնված տարածքների մասին տեղեկություններ:

4. Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկությունները՝

1) վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում առնվազն երկու անգամ՝ մարտ և հուլիս ամիսներին, տեղում ճշտում է սույն կարգի 3-րդ կետում նշված տարածքների մակերեսները և ստուգում է դրանց մշակության ու խնամքի ընթացքը.

2) յուրաքանչյուր ստուգայցի արդյունքներով կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնավորովի անդամների, հապատասխան համայնքների ղեկավարների կողմից և հաստատվում է համայնքի ղեկավարի կնիքով.

3) յուրաքանչյուր ստուգայցի արդյունքներով կազմված արձանագրությունների վերաբերյալ ամփոփ տեղեկություն է ներկայացնում նախարարություն և համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին: